ՏԱԹԵՎԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կառավարում, բակալավրիատ, 3-րդ կուրս

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *աղքատություն, եկամուտների անհավասարություն, կենսամակարդակ, նվազագույն սպառողական զամբյուղ, սոցիալական պաշտպանություն*

Աղքատությունը և դրա դրսևորումները ցանկացած պետությանը սպառնացող հիմնախնդիրներ են, որոնց լուծումը երկրի ընդհանուր զարգացման համատեքստում անչափ կարևոր է: Հայաստանի Հանրապետությունը ևս բացառություն չէ: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն սոցիալական պետություն է, նշված խնդիրների լուծումն առավել առանցքային է դիտվում, հետևաբար ՀՀ-ում աղքատության ուսումնասիրությունը պարզապես անհրաժեշտություն է:

Սույն հոդվածում ներկայացվել և վերլուծվել է ՀՀ-ում աղքատության ընդհանուր պատկերը: Այդ նպատակով ուսումնասիրվել է աղքատությունը՝ ըստ տարածաշրջանների, ինչպես նաև՝ եկամուտների անհավասարությունը և դրա հետ կապված խնդիրները: Աշխատանքում կարևորվել են ՀՀ սոցիալական պաշտպանության հիմնական գործառույթները, աղքատության նվազեցմանն ուղղված միջոցառումները և վերջիններիս արդյունավետության գնահատումը:

Ներածություն: Տնտեսական աճը կամ տնտեսական բարձր այլ ցուցանիշներն առ ոչինչ են, եթե տվյալ երկրում առկա է աղքատություն, ուստի պետությունները ձգտում են նվազագույնի հասցնել աղքատությունը և/կամ դրա ցանկացած դրսևորում: Վերջինս արտահայտվում է թե՛ քանակական, թե՛ որակական բնութագրերով, այստեղից նաև՝ *նյութական և ոչ նյութական աղքատություն* կատեգորիաներով: Սույն թեմայի ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ երևույթը կրում է մշտական և համընդհանուր բնույթ և սպառնում է յուրաքանչյուր պետության: ՀՀ-ին նույնպես բնորոշ է աղքատության որոշակի մակարդակ: Աղքատությունը ՀՀ-ում հաշվարկվել է՝ սկսած 1996 թվականից, և դրա նվազեցումը մշտապես եղել է գլխավոր և առաջնային նպատակ: Այս ամենով պայմանավորված՝ ՀՀ սոցիալական պաշտպանության մի շարք գործառույթներ նպատակաուղղված են վերոգրյալի իրականացմանը: Մեր ուսումնասիրության շրջանակներում կբացահայտենք հիմնական ցուցանիշները, կներկայացնենք պատճառահետևանքային կապերը և աղքատության նվազեցմանն ուղղված գիտականորեն հիմնավորված լուծումները:

Գրականության ակնարկ: Աղքատության և դրա դրսևորումների ուսումնասիրությունը մշտապես եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Պլատոնի բնորոշմամբ՝ «Ինչպիսին էլ լինի պետությունը, նրանում միշտ կա երկու պետություն՝ միմյանց հանդեպ թշնամական. մեկը հարուստների պետությունն է, մյուսը՝ աղքատների», իսկ Արիստոտելն ընդգծում էր սոցիալական անհավասարությունը և կարծում, որ բոլոր պետություններն ունեն երեք դաս՝ հարուստներ, աղքատներ և միջին խավ: Այս տեսակետից, պետությունը պետք է հոգ տանի աղքատների մասին, քանի որ աղքատությունը ծնում է հանցագործություններ և ապստամբություններ, իսկ աղքատության

բարձր մակարդակ ունեցող երկրները դատապարտված են կործանման[1]: Թ. Մալթուսը աղքատության հիմնական պատճառը տեսնում էր բնակչության աճի մեջ, այն է՝ բնակչությունն աճում է երկրաչափական, իսկ նրանց կենսագործունեության համար անհրաժեշտ միջոցները՝ թվաբանական պրոգրեսիայով: Վերջինս նշում է, որ աղքատության կանխարգելումը կախված է մարդկանց ռացիոնալ որոշումներից՝ կապված միայն միջոցների և հնարավորությունների առկայության պարագայում ընտանիք կազմելու և երեխաներ ունենալու հետ[2]: Ժ.Ժ. Ռուսսոն աղքատությունը համարում էր անգրագիտության դրսևորում և բարոյական վատառողջություն[3]:

Համաշխարհային բանկի բնորոշմամբ՝ «Աղքատությունը հնարավորությունների պակասն է՝ եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակը, արտադրական և անձնական գույքի բացակայությունը կամ անբավարարությունը, սոցիալական ծառայությունների ցածր մատչելիությունը, սոցիալական կապիտալի, անվտանգության և ազդեցության ցածր մակարդակը»[4]:

Խնդրո առարկայի ուսումնասիրությունների շրջանակներում հանդիպում ենք բազմաթիվ տեսակետների: Լուսինե Կարապետյանի և Լիլիթ Պետրոսյանի համատեղ հոդվածում նշվում է, որ աղքատությունն ինքնին ցավալի երևույթ է, որն իր հետ ծնում է բազմաթիվ բարդ հիմնախնդիրներ՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական: Ամբողջ աշխարհը պայքարում է այս երևույթի դեմ, որի ամենախոցելի տեսակը մանկական աղքատությունն է: Առ այսօր աշխարհում չկա գեթ մեկ երկիր, որը գտած լինի դրա հիմնովին վերացման «դեղատոմսը»: ՀՀ-ն այս առումով բացառություն չէ. մեր երկիրը տեսել է և՛ ավերիչ երկրաշարժ, և՛ արցախյան պատերազմներ, համավարակ և այլն, ինչի հետևանքով երկրում դեռևս շարունակում է բարձր մնալ աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ յուրաքանչյուր երրորդ երեխա աղքատ է, ինչը մտահոգիչ ցուցանիշ է[5]:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն, մշտապես անդրադառնալով աղքատության հիմնախնդրին, ներկայացնում է ՀՀ սոցիալական պատկերը, վերջինիս բազմագործոնային վերլուծություն կատարում հատուկ մեթոդաբանությամբ[6]:

Մեթոդաբանություն: Վերլուծության ընթացքում կիրառվել են նկարագրական, համադրման, համակարգային, վերլուծական, արտածման և մակածման, համեմատական մեթոդներ: Նկարագրական մեթոդով ներկայացվել են աղքատության էությունը և վերջինիս առնչվող այլ հասկացություններ: Աշխատանքում կիրառվել է արտածման մեթոդը՝ փոխկապակցված տարրերի առանձնակի վերհանումը, ինչպես նաև՝ մակածման եղանակով և համակար-

---

[1] Տե՛ս **Ишмуратова В. Г,** Содержание категории «бедность» в новейшей истории России, «Проблемы современной экономики», Санкт-Петербург, 2010, էջ 75-76:

[2] Տե՛ս **Կիրակոսյան Գ., Թավադյան Մ., Գրիգորյան Ս.,** Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., 2004, էջ 160:

[3] Տե՛ս **Զաքարյան Ս. Ա.,** Փիլիսոփայության պատմություն, Եր., 2000, էջ 223:

[4] https://www.worldbank.org/en/understanding-poverty (մուտքի ամսաթիվ՝ 24.02.2023 թ.)

[5] Տե՛ս **Կարապետյան Լ., Պետրոսյան Լ.,** Սոցիական քաղաքականություն, մաս 1-ին, Մանկական աղքատության հիմնախնդիրները և դրանց դրսևորումները ՀՀ-ում, էջ 1-24, https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/5.pdf

[6] https://armstat.am/file/article/poverty_2022 (մուտքի ամսաթիվ՝ 15.02.2023)

գային մեթոդով վերջինիս տարրերի դիտարկումը՝ որպես մեկ ամբողջություն: Ցուցանիշների շարժընթացը և փոխկապվածությունը ցույց է տրվել գրաֆիկական պատկերմամբ, մի քանի ցուցանիշների փոփոխությունը նկարագրելու համար կիրառվել են համեմատական և դինամիկ մոտեցման մեթոդներ:

Վերլուծություն: Բնակչության բարեկեցության և կենսամակարդակը ներկայացնող կարևորագույն ցուցանիշներից է աղքատության մակարդակի գնահատումը: Վերջինս դրսևորվում է բազմակողմանի և արտահայտվում է բնակչության ինչպես *նյութական*, այնպես էլ *ոչ նյութական աղքատություն* եզրույթներով: Նյութական աղքատությունը ներկայացնում է դրամական եկամուտների անհավասարությունը, ոչ նյութականը՝ կրթական ցածր մակարդակը, առողջական վատ վիճակը, պահանջմունքների բավարարման դժվարությունները, սոցիալական բարձր շերտերի կողմից մերժվածությունը, խոսքի ազատության սահմանափակումը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում աղքատության վերացումը և սոցիալական տարբեր շերտերի միջև անհավասարության նվազեցումը գլխավոր նպատակներից են: Այս տեսանկյունից աղքատության մակարդակի գնահատումը պետք է լինի ճշգրիտ և ժամանակին: ՀՀ-ում աղքատության չափման հիմնական մոտեցումը բացարձակ (ըստ սպառման) աղքատությունն է: Այն լավագույնս է արտահայտում տնային տնտեսությունների կենսամակարդակի որոշակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունը[1]:

Հատկանշական է նաև աղքատության գծի քննարկումը աղքատության գնահատման տեսանկյունից: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում քննարկել նաև նվազագույն աշխատավարձը, որը ուղիղ համեմատական է նվազագույն սպառողական զամբյուղ կատեգորիային: Ըստ ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ նախատեսվում է նվազագույն աշխատավարձը 68000 ՀՀ դրամից հասցնել 85000 ՀՀ դրամի[2], սակայն, հաշվի առնելով ՀՀ-ում առկա գնաճը, կարող ենք ասել, որ իրական աշխատավարձը չի բարձրացել: Աղքատությունը դիտարկվում է այն ժամանակ, երբ անհատի եկամուտները չեն բավարարում նվազագույն սպառողական զամբյուղով նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը: Աղքատ են համարվում այն տնային տնտեսությունները, որոնց բյուջեն անբավարար է այդ զամբյուղի արժեքն ապահովելու համար: Իսկ աղքատության գիծը սահմանվում է՝ հաշվի առնելով մարդու կենսագործունեությանն անհրաժեշտ սպառողական զամբյուղի պարենային և ոչ պարենային ապրանքների ձեռքբերման միջոցները: Շատ հաճախ աղքատության տարեկան գնահատումը հիմնված է լինում գների ընդհանուր մակարդակի փոփոխության համեմատ աղքատության գծերի տարեկան վերանայման վրա՝ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) կիրառությամբ:

Աղքատության գիծը եկամտի այն մակարդակն է, որը կարող է ապահովել կենսագործունեության նվազագույն պայմաններ[3]: Գծապատկեր 1-ում անդրադարձել ենք *աղքատության վերին* (57744 դրամ/ամսական), միջին (48145 դրամ/ամսական), *ստորին* (38548 դրամ/ամսական) և *պարենային*

---

[1] https://www.worldbank.org/en/topic/poverty/overview (մուտքի ամսաթիվ՝ 22.02.2023)

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.)/ https://www.gov.am/files/docs/4586.pdf (մուտքի ամսաթիվ՝ 24.02.2023 թ.)

[3] https://www.worldbank.org/en/topic/poverty/overview (մուտքի ամսաթիվ՝ 22.02.2023 թ.)

գիծ (26500 դրամ/ամսական) հասկացություններին (ՀՀ օրինակով): Ըստ վերին գծի՝ մեկ չափահաս անձի շնչով աղքատ են համարվում նրանք, որոնց սպառումը ցածր է աղքատության վերին գծից, համապատասխանաբար աղքատ են գնահատվել նրանք, որոնց սպառումը ցածր է եղել ստորին գծից, չափավոր աղքատ՝ միջին գծից ցածր սպառում ունեցողները, ծայրահեղ աղքատ՝ պարենային գծից ցածր սպառմամբ անձինք[1]:

Նշենք նաև, որ աղքատության մակարդակի վերոնշյալ գնահատումը ցույց չի տալիս աղքատության ինտենսիվությունը, այն է՝ աղքատների տեսակարար կշիռը, որը ցածր է աղքատության գծից: Այս առումով օգտագործվում են աղքատության խորություն (2020-ին՝ 4,7%, 2021-ին՝ 4,8%) և սրություն (2020-ին՝ 1,3%, 2021-ին՝ 1,4%) կատեգորիաները[2]: Առաջինը նկարագրում է, թե որքանով է աղքատների միջին եկամուտը ցածր աղքատության գծից, իսկ սրությունը բացատրում է աղքատների միջև սպառման անհավասարությունը, որի պատճառ կարող են լինել թե՛ եկամուտների անհավասարությունը, թե՛ ոչ նյութական այլ պատճառներ, կամ այն, որ աղքատ համարվող ընտանիքներից մի մասում շատ են անչափահաս երեխաները: Ուստի, ծագում է սպառման անհավասարություն:

Պահանջմունքների անսահմանափակության պայմաններում տնտեսական մարդը ձգտում է եկամտի աղբյուրների բազմազանեցման, որպեսզի հասնի պահանջմունքների հնարավորինս բավարարման: Եկամուտների ձևավորմանը զուգահեռ առկա են վերջիններիս արդարացի բաշխման և օպտիմալ օգտագործման խնդիրներ: Եկամուտների բաշխումը և վերաբաշխումը սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչներից են:

Աղքատության ձևավորման նախադրյալը նախևառաջ պահանջմունքների մասնակի կամ ցածր բավարարվածությունն է, որը բխում է եկամուտների անհավասարությունից: Վերջինս կարող է չափվել մի շարք մեթոդներով, ներառյալ՝ Ջինիի գործակցի միջոցով[3]: Որոշ տնտեսագետներ կարծում են, որ անհավասարությունը ինչ-որ չափով անհրաժեշտ և ցանկալի է, սակայն չպետք է հերքել այն փաստը, որ եկամուտների չափազանց մեծ անհավասարությունն առաջ է բերում անարդյունավետության խնդիրներ և սոցիալական անարդարություն: Ջինիի գործակիցը վիճակագրական ցուցանիշ է, որը որքան մոտենում է մեկին, այնքան իրադրությունը վատանում է, քանի որ սա վկայում է եկամուտների անհավասար բաշխման խորացման մասին[4]: ՀՀ վիճակագրական կոմիտեի տարածած տվյալների համաձայն՝ ՀՀ-ում այս ինդեքսը, ըստ սպառման, 2019-ին կազմել է 0,279, 2020-ին՝ 0,221, 2021-ին՝ 0,232, իսկ, ըստ եկամուտների, 2019-ին՝ 0.381, 2020-ին՝ 0,363, 2021-ին՝ 0,367[5]: Ինչպես տեսնում ենք, ըստ եկամուտների, Ջինիի գործակիցը խորանում է:

---

[1] https://armstat.am/am/?nid=81&id=2529 (մուտքի ամսաթիվ՝ 19.02.2023 թ.)
[2] https://armstat.am/file/article/poverty_2022 (մուտքի ամսաթիվ՝ 19.02.2023 թ.)
[3] Տե՛ս **Աղաջանյան Հ.**, Տնտեսագիտության տեսություն, մաս 2, Եր., 2015, էջ 467-469:
[4] https://worldpopulationreview.com/ (մուտքի ամսաթիվ՝ 24.02.2023 թ.)
[5] https://armstat.am/file/article/poverty_2022 (մուտքի ամսաթիվ՝ 19.02.2023 թ.)



Գծապատկեր 1. ***Ջինիի գործակցի շարժընթացը ՀՀ-ում 2019, 2020, 2021 թթ.՝ ըստ սպառման և ըստ եկամուտների***[1]

Գծապատկեր 2-ում ներկայացրել ենք ՀՀ աղքատության մակարդակը՝ ըստ տարածաշրջանների, իսկ քարտեզ 1-ում՝ այդ տարածաշրջաններում ըստ սպառման ագրեգատի: Այսպես, օրինակ, աղքատությունը՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, ընդ որում՝ ըստ որոշ օրինաչափությունների, քաղաքաբնակների (աղքատ է 21.8%-ը) համեմատությամբ գյուղաբնակներն (աղքատ է 33%-ը) ավելի աղքատ են: Ամենաաղքատ մարզերն են Գեղարքունիքը և Շիրակը, իսկ աղքատության ամենացածր մակարդակը Սյունիքի մարզում է, որտեղ բարձր է նաև միջին աշխատավարձը՝ հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների մեծ տեսակարար կշռի հաշվին:



Գծապատկեր 2. ***Աղքատությունը ք. Երևանում և ՀՀ մարզերում***

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը, աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2021, https://armstat.am/(մուտքի ամսաթիվ՝ 18.02.2023 թ.):

Քարտեզ 1. ***Ըստ սպառման ագրեգատի՝ մանկական աղքատության մակարդակը ՀՀ մարզերում և ք. Երևանում (%)[1]***

Հատկանշական է նաև աշխատուժի մասնակցության քննարկումը աղքատ բնակչության մեջ: Գծապատկեր 3-ից պարզ է դառնում, որ աղքատ բնակչության 67%-ը տնտեսապես ակտիվ է, իսկ 33%-ը՝ տնտեսապես ոչ ակտիվ, ծայրահեղ աղքատներից տնտեսապես ակտիվ է 70,8%-ը, տնտեսապես ոչ ակտիվ՝ 29,2%-ը: Կարելի է ասել, որ ՀՀ-ում աղքատության պատկերը կապված չէ գործազրկության մակարդակի հետ, քանի որ, ինչպես տեսնում ենք, աղքատ բնակչությունը նույնպես ցուցաբերում է տնտեսական ակտիվություն՝ ներառվելով աշխատուժի մեջ:



Գծապատկեր 3. ***ՀՀ-ում աշխատուժի մասնակցությունը՝ 15-75 տարեկան աղքատ բնակչության մեջ (%)[1]***

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը, աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2021 թ., https://armstat.am/(մուտքի ամսաթիվ՝ 18.02.2023 թ.):

ՀՀ-ում աղքատության հիմնախնդիրներն ավելի խոր արմատներ ունեն: Խորհրդային տարիներին *աղքատություն* կատեգորիան գրեթե չէր կիրառվում. այն թաքնված էր պլանային տնտեսության՝ «հավասարություն բոլորին, պետության սեփականություն» կարգախոսի քողի տակ, իսկ արդեն նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին տարիներին աղքատությունն արմատներ ձգեց և տարածվեց մի քանի փուլերով: Ի սկզբանե, դրամի՝ շրջանառության մեջ մտնելով և ռուբլու արժեզրկմամբ, սկիզբ դրվեց տնային տնտեսությունների սնանկացման և աղքատության ժամանակաշրջանին: Մինչ դա էլ՝ 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով շատերը կորցրին իրենց տները և աշխատավայրերը, ձեռք բերեցին հաշմանդամություն: Այնուհետև պատերազմական և հետպատերազմական շրջանն ավելի սրեց իրադրությունը: 2008 թ. ճգնաժամը նույնպես նախադրյալ էր աղքատության խորացման: Վերջին տարիներին համաճարակային, պատերազմական և ներքաղաքական իրադրությունը վատթարացրեց իրավիճակը, և աղքատության նվազեցման սպասելիքները չարդարացվեցին: Այս ամենը հանգեցրեց խոր հակասությունների և աղքատության խորացման ավելի մեծ թափի: ՀՀ ոլորտային քաղաքականության գլխավոր խնդիրներից են դարձել աղքատության վերացումը և սոցիալական տարբեր շերտերի միջև հավասարության ապահովումը: Այս համատեքստում կարևոր է նշել, որ կայուն զարգացման նպատակներն այժմ քաղաքակրթության հիմքն են և ընդգրկել են կյանքի գրեթե բոլոր ոլորտները: ՀՀ-ում երկրի կայուն զարգացմանը միտված առաջին ազգային համալիր ծրագիրը 2003 թ. ՀՀ Կառավարության կողմից ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրն» էր[2], որը 2008-ին վերանվանվեց «ՀՀ կայուն զարգացման ծրագիր»:

ՀՀ-ում աղքատության վերացմանն ուղղված են սոցիալական պաշտպանության հիմնական գործառույթները, որոնց հիման վրա բնակչության խոցելի խմբերին առաջարկվում են համապատասխան ծրագրեր, ներառյալ՝ պետական սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության, զբաղվածության ծրագրերը: Սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում հանդես է գալիս սոցիալական ապահովագրության և օգնության ձևով՝ իրականացվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից[3]: Աղքատության նվազեցման համար առանցքային նշանակություն ունեն աղքատ համարվող բնակչության շրջանում կրթության և արժանապատիվ աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը, սոցիալական հավասարության ապահովումը՝ ի հաշիվ եկամուտների արդյունավետ բաշխման և վերաբաշխման:

Եզրակացություն: Ուսումնասիրելով և վերլուծելով աղքատությունը և վերջինիս դրսևորումները ՀՀ-ում, բացահայտելով աղքատության հիմնախնդիրները և դրանց առաջացման նախադրյալները՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

---

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը, աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2021 թ., https://armstat.am/ (մուտքի ամսաթիվ՝ 18.02.2023 թ.):

[2] https://www.irtek.am/views/act.aspx?aid=22398 (մուտքի ամսաթիվ՝ 25.02.2023 թ.)

[3] Տե՛ս «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում», զեկույց, Եվրոպական հանձնաժողով, 2021, էջ 8:

- աղքատությունը մշտական երևույթ է, և դրա լիովին վերացումը անիրատեսական է, քանի որ, բացի արտաքին (էքստերնալ) գործոններից, կան մի շարք հոգեբանական գործոններ, օրինակ՝ մարդկանց որոշ մասը պարզապես չի ցանկանում աշխատել, կամ սպառման աղքատությունը կապված է հենց բազմազավակ ընտանիքների անհավասար սպառման հետ (փոքր ընտանիքների համեմատ):
- Աղքատության նվազեցմանն ուղղված միջոցառումներ իրականացնելիս պետք է սահմանվեն իրատեսական նպատակներ և դրանց հասնելու կոնկրետ միջոցներ: Հարկավոր է միջոցառումները գործարկել համակարգային: Քանի որ ՀՀ առանձին տարածքներում աղքատության մակարդակը տարբեր է, ուստի պետք է ապահովել սոցիալական պաշտպանության հավասարություն և ձգտել բարեկեցության ու կենսամակարդակի բարձրացման ամբողջ Հայաստանում:
- Պետությունը պետք է ապահովի աղքատների հնարավոր սոցիալական ներգրավվածությունը, անվճար կրթության և առողջապահական ծառայությունների հնարավորությունը, աղքատ ընտանիքների սպառման արտոնությունները, վերջիններիս լիարժեք ինտեգրումը հասարակությանը, եկամուտների արդյունավետ բաշխումը և վերաբաշխումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղաջանյան Հ., Տնտեսագիտության տեսություն, մաս 2, Եր., 2015:
2. Կիրակոսյան Գ., Թավադյան Մ., Գրիգորյան Ս., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., 2004:
3. Զաքարյան Ս. Ա., Փիլիսոփայության պատմություն, Եր., 2000:
4. «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում», զեկույց, Եվրոպական հանձնաժողով, 2011:
5. Կարապետյան Լ., Պետրոսյան Լ., Սոցիալական քաղաքականություն, մաս 1-ին, Մանկական աղքատության հիմնախնդիրները և դրանց դրսևորումները ՀՀ-ում, https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/5.pdf
6. Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիր 2019, https://www.gov.am/, 2021-2026 թթ., https://www.gov.am/
7. Ишмуратова В. Г, Содержание категории «бедность» в новейшей истории России, «Проблемы современной экономики», Санкт-Петербург, 2010.
8. Paolo Liberati, Charting Income Inequality The Lorenz Curve, University of Urbino, Institute of Economics, Italy, 2005, Charting income inequality
9. armstat.am
10. www.arlis.am
11. www.worldbank.org

ТАТЕВИК КАРАПЕТЯН
Менеджмент, бакалавриат, 3-й курс

ПРОБЛЕМЫ БЕДНОСТИ В АРМЕНИИ

Ключевые слова: *бедность, дифференциация доходов, уровень жизни, минимальная потребительская корзина, социальная защита*

Бедность и её проявления - проблемы, угрожающие любому государству, важность решения которых в контексте общего развития страны огромна. Республика Армения не является исключением. Более того, учитывая то обстоятельство, что РА является социальным государством, решение этой проблемы приобретает ключевое значение, поэтому изучение проблем бедности в Армении просто необходимо. В этой статье представлено и анализировано общее состояние бедности в Армении. С этой целью изучена бедность в Армении по регионам, а также дифференциация доходов и связанные с ней проблемы. В работе подчеркивается важность основных функций социальной защиты Армении, меры, направленные по сокращению бедности, и эффективность их оценки.

TATEVIK KARAPETYAN
3rd year Bachelor, Department of Management

ISSUES OF POVERTY IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *poverty, incomes inequality, living standards, minimum consumer basket, social protection*

Poverty in its manifestations is an issue that threatens every country, the solution of which is of great importance in the context of a country's overall development. The Republic of Armenia is not an exception, either. Moreover, taking into account the fact that the RA is a social republic, it is more crucial to solve this problem, therefore, the study of the problem of poverty in the RA is simply a must. Hence this article presents and analyzes the overall picture of poverty in the RA. To accomplish this objective, the poverty in the RA by regions, as well as the inequality of incomes and related issues have been examined. The article highlights the importance of the main functions of the social welfare of the RA, the measures to decrease poverty and the assessment of their efficiency.